Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

89 - 2
5

8
Ru-68

Հ.Խ.Ս.Հ. ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. П. БИБ-КА АРМ. С. С. Р.
ՓՈԽԱՌՆԱԿԱՆ ՖՈՆԴ
ОБЫЕННЫЙ ФОНД
Ա. ՍԱՍՆԵՑՈՒ ԱՆՎԱՆ
ИМ. А. МАСНИ

386

# ՕԳՏԱԿԱՐ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

## Գ.

ԳՐԱԴԱՐԱՆ-ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
Ս. ԲԱԼԵՆՑ
4. ՊՕԼԻՍ CONS/PLE
B. BALENTZ
LIBRAIRE-EDITEUR
ՊԱՐԻԶ

13
56
801

476-ԱՀ

Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ Յ. ՏԷՐՈՅԵՆ
ԱՇԽԱՐ ԷՖԷՆԴԻԽԱՆՆ. ԹԻՒ Յ.

Printed in Turkey

8
4-68
ԱՂ
54
40

# ԽՈՍԼԿՈՐԸԿՔ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԱՏՈՄ Ց. ՏԷՐՈՅԵՆՑ

ԿՈՍՏԵՆԴՆԱՊՈԼԻՍ

1862

476-ԱՐ

~~32865~~ Ա. Հ.

15335-58

Հայ. Խորհրդ. Գրադարան
Գոս. Պուշկ. Գրադարան
ՀԽՍՀ-ՍՍՀ Ա.
Ամ. Ա. Մյասնիկյան
անվան պետական

(4/42.)

Printed in Turkey

# ԻՈԼԱԿՈՐԾԿՔ

## (1580)

Այր իւրաքանչիւր ըստ
գործոց իւրոց ընկալցի ։
Ս · Աւետ ·

Սիրելի ընթերցող · Հիմակուան
քեզի պատմելիք պատմութիւնս քաղա-
քական պատերազմ եղած ժամանակի մէջ
եղած է · այնպիսի ժամանակ մը որ՝ ա-
մէն մարդ իւր անձը պատուելուն եւ
պատուել տալ ուզելուն համար ամէն
տեսակ ընկերական կապերը անհետացած
էին մանաւանդ կատաղի զինուորաց մէջ՝
որոնք իրենց շահէն զատ ուրիշ օրէնք

չունէին։ Ուստի այն անխղճմտանք եւ գաղղիան տակն ու վրայ ընող գժտութիւնները իրենց շահուն նպաստ մը ընել տալ ուզող մարդոց վրայ անբարոյականութիւնը եւ տգիտութեան մեծը տիրած էր, ասոր համար պէտք է որ մեր խոշոր-ներուն (խոզի ճաղ) մէկ քանիին բարուցը վրայ տեսնուած սոսկալի եղած բաներուն ներէք։ Դուք, կրթեալ եւ սիրուն տղա՛ք, այն կոշտ եւ տգէտ եւ անտոկոր վիճակի մէջ գտնուող հօրերնէն ստացած անգթութիւնը տեսնելով պիտի զայրանաք. դուք քանի՛ բարկանաք մեք պիտի գոչենք. Բարկացէ՛ք, բարկացէ՛ք. որովհետեւ մենք այս վայրենի ասնասուններուկը ձեզի տրուած եւ անոնց չունեցած բարոյականութեան աղէկութիւնը, ձեզի տրուած կրթութեան եւ

անոնց անշուշտ մենք ալ ունիմք ըսա-
ծին բարութիւնը հասկցընել կուզեմք։
Կարծեմք կրնամք ձեզի ցուցընել ալ որ ե-
թէ այն առածը՝ որ կըսէ «Ղէկ շո՞ւնը է՞ր
ցէ՞ղ է՞ն կը փալէ ճշմարիտ է, անկարելի չէ
այս արիւնհեղութեան ըրած ազդեցու-
թիւնէն ազատ մնալ։ Այս խոչքորներուն
'ի ծնէ մոլութեան մէջ մեծցած տղոց քով
ուրիշ տղայ մ'ալ պիտի նկարագրեմք ո-
րըն որ անոնց եղբայրն ը լլալով ալ աշխա-
տութեամբ ուղիտութեանը կը յաղթէր,
եւ նոյն իսկ մոլութեան գլխաւոր տեղը
առաքինութիւնը 'ի գործ կը դնէր։ Ա-
սոր շատ մը համակրութիւն, իսկ միւս-
ներուն զզուանք եւ անարգութիւն։ Բայց
գուն վերջը նայէ. գուցէ պատիժը պատ-
ըսատ է եւ սպառնալի. գո՛ւցէ այր իւրա-
քանչիւր ըստ գործոց իւրոց ընկալցի։

# Է.

# ՎԱՐԵԱԶԻՆ ՈՐՍԸ

1580 տարին այնպիսի ժամանակ մըն էր որ խեղճ, չորս կողմը խայթոցներով, գեղարդեան եւ հրացանի հարուածներով լեցուն Գաղղիան՝ ինք իւր աղրաներովը իւր փորը կը պատռէր։ Այս աբիւնալից տարուոյս մէջ ոչ եղբայր իւր եղբայրը կը ճանաչէր, եւ ոչ բարեկամ իւր բարեկամը. մի՛ միայն Աստուծոյ անուանը համար իրենց արիւնը թափող կրօնա-

ուրներ կային։ Գաղղիայի ամէն կողմը սուրերու շաչիւն, հրացանաձգութիւն, ամրոցներու պաշարում, գաղղիացիի գաղղիացւոյ դէմ կատաղի պատերազմ, մեծ կոտորածներ որոնք Պէրոլիէն հաշ-ուած* անունով զարդարուած էին, դա-ռանակալք, քարաձգութեամբ կամ տուն մը Սաղմոսով** մեռած հազարաւոր մար-

* Տօն Ս. Բարդուղիմեայ։ Այս օրուան կոտորածիս մէջի մեռած մարդոց թիւը մէկ քանին հարիւր հազար ըսին, եւ նոյնը ըսողները մինչեւ տասն հազար հոգիի իջեցուցին. բայց մեռածներուն ճիշդ թիւն է՝ բոլոր Գաղղիայի մէջ 786 հոգի։

** Կոտորած Վասսեայ, որուն պատ-ճառն այսպէս կը պատմուի։ Երկուշաբթի օր մը Կիզեայ դուքսը իւր քահանայն ե-

դիկ , այն ալ ամէն ժամ, ամէն վայրկեան մի՛ միայն մէկ բառի մը համար. այսինքն կոնոլէ կամ հոնոլ (կալվինական)։ Վերջապէս կրօնական պատերազմաց ժամանակ էր։

Կեղեցի կը խրկէ պատարագ ընելու համար։ Ճամբան աղաղակ մը կը լսէ եւ կերթայ կը տեսնէ որ խեղ մը մարդիկ տեղ մը ժողոված կը քարոզէին եւ կ՚աղօթէին, բայց աղաղակը շատ էր։ Կիզեայ դուքսը այս լսելով ազնուատոհմ Պրըզէ անուն պատանի մը կը խրկէ հոն, եւ ազաչել կուտայ որ մինչեւ որ պատարագը լմննայ սպասէն, եւ ընելիքնին ետքը ընեն։ Երբ Պրըզէ ասոնք ամբոխին գլխաւորին բաւ, որ քարոզիչ մըն էր, պատասխան ընդունեցաւ որ՝ դուքսըն ալ մեզի պէս մարդ է. ուստի մենք զանիկայ չենք ճանաչեր՝ քանի որ այսչափ մարդիկ հոս ժողվուած են Աստուծոյ աղօ-

Այս պատերազմական զբաղմանց ժամանակը անունով զինուորներուն, տեսակ մը մարդիկ՝ որոնք ուրիշ երկրէ կուգային եւ աւելի շատ ստակ տուողին իրենց թիւը եւ սուրը կը նուէր

թելու համար, եւ այս պաշտամունքէն ալ չեմք դադրիր։ Քարոզչին ասոնք ըսած ժամանակը՝ միւսները Պրըզէին եւ անոր հետը եղողներուն քար կը նետէին, ուսկից կռիւը բրդաւ։ Այս կոտորածիս մէջ (որն որ այս անունը ստանալը չափազանցութեամբ է կըսուի) մեռածներուն թիւը ոմանք մինչեւ 8-900 հոգւոյ կը հանեն, եւ ոմանք մինչեւ վաթսուն հոգի մեռած եւ 200էն աւելի վիրաւոր կը դնեն, որն որ վերինէն աւելի հաւանական կերեւի։ Պատմութեանս հեղինակին խօսքերէն ինքնին կերեւայ որ չափազանցութեամբ պատմողներէն առած է։

րէին՝ ինչ բանի մէջ եւ ինչ պատճառով ըլլայ նէ ըլլայ, յարմար ատեն էր։ Իրենց շէն էր միայն հաւատքնին, եւ ոսկին, ատուածը՝ որն որ ամենէն շատ կը պաշտէին։ Շատերը զատոնք չէին ճանաչեր. սակայն պէտք է ըսել, թէ պէտ եւ ազգային սերերնուս կը դպչի, թէ՝ մէջերնին մէկ քանի շուայտուտ դաղղեւացիներ կային՝ որ ամէն տեսակ չափազանցութիւն զանոնք այս՝ ամօթալի արհեստիս մէջ բերած ձգած էր։ Այս անկիրթ ջոկերուն գործունէութեան ժամանակը՝ կրօնական պատերազմաց առաջին ժամանակները անոնց աւար առնելու առիթներ ալ մատուցին, եւ շատերը ժամանակուան թշնամին կողոպտելը հերիք կը սեպէին առանց անմեղ անցաւորին ձեռք դպցընելու։ Բայց շատերը այս շփոթու-

թիւններն ու խուսափութիւններն իրենց
օգտին գործածելով նոյն դաւակցու-
թենէն ելած, եւ 'ի վերաս թշուառ ճա-
նապարհորդաց՝ մեծ ճամբուն վրայ
մարդ կողոպտելու սկսած էին։ Եւ ա-
ւելին կայ. Երբեմն բնակչաց վրայ ալ կը
յարձակէին, կը պաշարէին, ամէն բան
կրակի կուտային, արիւն կը հոսեցը-
նէին. սոսկ իրենց շահուն համար կ'աշ-
խատէին այսպէս, եւ թէ՛ քաղաքական
եղեր թէ կրօնական նպատակներին ուրիշ
բան չ'էր, բայց միայն ծակաչքութիւն-
նին եւ աւարհարութեան ցանկութիւն-
նին յագեցընել։

Այս աւազակներուն ամենէն սոսկալին աներկրայարար կարճահասակ բի-
գարտացի երիտասարդ մ'էր, որոյ ե-
րեւելի աւերմունքներն այնպէս արիւ-

նոտած էին իրեն մեծամեծ գործոց կեղրոնատեղի որոշած Ելիէրի շրջակայքը՝ որ Ղբէէրցի վարպետ մականունը դրին անոր։ Այս սոսկալի աւազակը յիսունի չափ անձանց կը հրամայէր. որոնք թէպէտ առանց սկզբան եւ անսանձ մարդիկ, բայց գլխաւորներնուն կամացն այնպէս հպատակ էին, որ եթէ մեկզմէկ մեռցընել հրամայէր՝ շուտ մը հրամանը տեղը կ'երթար։ Նաեւ, այս կերպ անձեր հպատակեցընելու պէտք եղած ամէն բան ունէր Վարազը. հերակլեան զօրութիւն, անզուգեալ սիրտ, անդիմադրելի արիութիւն, եւ աւելի՝ անանկ շատ պակասութիւններ, մոլութեանց այնպէս շատցութիւն մը՝ որ հարկաւորապէս իւր վատաբարոյ եւ կոխուելու նախատահմանեալ հպատա-

ինչ կուռքն ըլլալու էր։

Ուստի այս մարդը Հըվէրի բը-
նակչաց սոսկում էր, որոնք հետը գործ
ունենալէն այնչափ կը վախնային՝ որ
անունը դողալով բերանին կ'առնէին։
Ճանապարհորդաց պաշտպան սրբոյն
Յուլիանոսի ըրած ամէն աղօթքներուն
մէջ սա հաւատաւոր ալ կը յաւելուին.
"Ո՛վ մեծդ սուրբ Յուլիանոս, ազատէ՛
զմեզ Վարազէն ու իւր գնդէն"։ Գի-
շերանց ճամբայ ընելու համար սաստիկ
անվախ ըլլալու էր, եւ ցորեկն իսկ վա-
խով ճամբայ կ'ելնէին. վասն զի գի-
տէին որ գիշեր ցորեկ Վարազին մէկ
բան ըսել էր, որ եթէ հարուստ աւար
մը ընելու յոյս ունենար՝ յանդգնու-
թեամբ նոյն իսկ Հըվէր ալ կը մտնէր
գէնքով։ Ի լուաց յանդգնութեան

գործեր կը պատմէին վրան, եւ մեծ ճամբուն վրայ գործածներն ամէն խօսակցութեանց նիւթ էին՝ երբ իւրաքանչիւր ընտանիք կրակը թաղելէն ետքը կը բակարանին շուրջը ժողվուելով զրուցատրելու սկսէր։ Այս մարդուն անունը կը գործածէին տղայքը վախցընելու համար. ինչպէս որ մինչեւ հիմայ Գրօք—Միդէն ըսելով կը սպառնան անոնց, այն աւուն ալ Ներկէրցի Վարազին անուամբը կը վախցընէին զանոնք եթէ խելօք չի կենային, եւ այս անունը մոգական ազդեցութիւն մը կ՚ունենար. լացը շուտ մը կը կտրէր.

Վարազին գործը միայն մեծ ճամբուն վրայ մարդ կողոպտել չ՚էր. երբ աշխատութիւնն արժող առթի մը պատահէր՝ անցորդներուն քսակը կը

պարպէր մեր տարակոյս։ Բայց նաեւ դաշտերը կիջնէր, եզերու կամ ոչխարաց հօտերու վրայ կը յարձակէր, եւ զանոնք իւր մարդոցը կերակուր կուտար։ Այս տեսակ մը գաղղիացի ելուզակները* յանդգնութիւնն աւելցնելով բոլոր շրջակայ ագարակատէրերէն փրկանք կ'առնէին, որոնք տարեկան որոշեալ գումարով մը անոնց խրամբին մնացեալներէն կ'ապահովցնէին զի-

* Բնագիրը անգղիերէն highlander, հայլէ՛նտր բառը կը գնէ, որ էտէնբուրկի, լեռնցի ըսել է։ Ասոնք Թերեւս լեռները բնակող տեսակ մը անգղիացի յելուզակներ են, որոց անուն առ հասարակ աւազակներու յատկացեալ էր։

ԱՍՍՀ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍԽՀ-СССР А.

(41/4) 4057 1535-85

բնեք. բայց շատ անգամ մինչեւ երեք հեղ տալ կուտային աւազակներն այս պարտաւորելի հարկը։ Եթէ ագարակատէրը դաշինքը մէջ բերելով երկրորդ անգամ մը վճարել չ'ուզէր՝ վայ անոր հօտին գլխուն. Աւարազը զանիկայ անտառները տանել կուտար՝ ուր էր իւր գլխաւոր կայանքը, եւ միայն այն ժամանակը զանիկայ տեղը կը դարձընէր, երբ ագարակատէրն իւր ուզածը տար. նաեւ միշտ այնպէս մը կը վարուէր որ քանի մը անասուն պակաս կ'ըլլար տուած ատենը, եւ կ'ըսէր թէ՝ Շահուն հաւար վար դրի։

Ո՛րդեակք. նա՝ ինչպէս կը տեսնէք՝ գարշելի մէկն էր, եւ անշուշտ կը զարմանաք որ Նըվէրի բնակիչքը չ'են ժողվուեր զէնքով նոյն պատուհա-

ը վերցընելու։ Սակայն ո՛չ։ Նոքա ընդ հակառակն երկու անգամ փորձեցին այդ բանը։ բայց երկու անգամն ալ զարնուեցան, բարեկամներնէն ու ծնողքներնէն մեծ մաս մը կորուսին, եւ ամէն ժամանակէ աւելի փրկանք տալու ստիպուեցան։ Պարապ տեղը պաշտօնատէրերու դիմեցին։ Ի զուր թագաւորին գնդերուն օգնութիւնը խնդրեցին։ Պաշտօնատէրերն ու զօրքերն աւազակ մը վանելէն աւելի կարեւոր գործ ունէին։ պէտք էր կալուածականները բնտռել ու գտնել։

Ալբերտի Վարազը չի պատժըուելէն համարձակութիւն առնելով այնուն ծանօթ բնակարան մ՝ընտրել ժըպրը հաճ էր։ ուր կը բնակէր նորա ընտանիքը։ ինքն ալ երբ հանգչիկ ուզե-

լով անտառները թողուր՝ երբեմն քանի մը օր հոն անցընել կ՚երթար։ Ընդանիքը ըսի. այո՛. գայլերը նոյնը կ՚ուզենան, վարազնե՛ր ինչու պիտի չ՚ուզենան։ Բայց ի՞նչ ընտանիք. տէ՛ր Աստուած։ Հինգ տղայ, հինգն ալ մանչ առանց մօր. խեղճ կինն ամօթէն ու ցաւէն մեռեր էր՝ տեսնելով որ Երկինք իւր անանկ պազանի մը հետ ամուսնութիւնն այնպէս բեղնաւորեց։ Հինգ անօգնական մանչեր իրենց հօրն ադելի օրինակի՞ն ձգուած։

Նրկէրցի Վարազին բնակարանը հնութենէն կէս մը փլած դղեակ մըն էր, որ իւր նախնի պայծառութենէն միայն տակաւին բնակութեան յարմար աշտարակիկ մը, եւ թէպէտ քիչ մը աւրուած՝ բայց հզօր պատուարներ

ունէր։ Այս աւերակներն երկար ա-
ռանէ 'ի վեր երեսի վրայ ձգուած էին՝
երբ Վարազն հոն հաստատուիլ եկաւ։
Առանց դժուարութեան նոյնն առաւ.
ոչ ոք անոր դիմադրել չի մտաբերեց.
ո՛չ իսկ դիւղին տէրը՝ որ երիտասարդ
պալատական մըն էր, եւ շատ հարուստ
ըլլալով այդպէս զին մը աչքին չ'էր ե-
բեւեր։ Տեղն աւազակին աղէկ եկաւ
իւր տղայքն հոն պառաւ Դինային
պաշտպանութեանը տակ զետեղելու։
Ասիկայ իւր երկրէն բաղդախնդիրնե-
րու խմբի մ'եռեւէն գաղղիա եկած
սկսուհի մ'էր. Վարազն օր մը զա-
նիկայ բռնեց. եւ նա այնուհետեւ նո-
րա բնակարանէն չի հեռացաւ։ Ամենէն
մօտակայ մէկ քանի ոգարակատարք
թէ եւ այս դրացութիւնը չ'խորժի-

ցին, բայց բան մ'ալ ըսելու չի համար-
ձակեցան, որով եւ Վարազը դղեկի մը
տեր եղաւ։ Նախ եւ առաջ կինոքը վա-
նել ուզուած ժամանակ դէմ դնելու
համար ձողապատնէշներ շինելու փու-
թաց. բայց եռքը տեսնելով թէ այդ-
պէս բան մէկը մոքէն չ'անցներ, այն
նախազգուշութիւններէն ալ եւ կեցաւ,
այնչափ վստահութիւն ունէր անուա-
նին ազդեցութեանը վրայ։ Երկրացիք
բնաւ հին դղեկին չ'էին մօտենար. զա-
նիկայ Վարազ՝ ոչՔը կ'անուանէին,
ինչպէս որ տղոցն ալ Խոճկորակ անունը
կուտային։ Արդ, Խոճկորակաց մեծին ա-
նունն էր Կնսար, որ հազիւ թէ տասն
ու վեց տարեկան կար։ Սիւնները կը
կոչուէին Ալբերտ, Գաստոն, Կարոլոս,
եւ Գերմանոս։ Ասոնց ամէն մէկին իւր

նախորդէն։ տարուան մը պզտիկ էր, ո-
րով տասն երկու տարեկան կ՚ըլլայ Գեր-
մանոս՝ որ ամէն ետքն եպած էր։

Ընձինքը ճանչցընելու համար ա-
ռանք ըսելիս յետոյ՝ եթէ կ՚ուզէք՝
սկսիմք պատմել։

Այն առեն՝ ուստի կը սկսի մեր
պատմութիւնը, Նըվէրցի Վարազը
դղեակը չ՚էր. բայց նոյն իսկ այն օրն
անոր գալստեանը կը սպասէին, ինչպէս
որ դիւրաւ կրնար գուշակուիլ կեսա-
րու եւ իւր երեք կրտսերներուն յաղ-
թական կերպէն, եւ պառաւ Գինայն
ուխտակրաց փոքրադուներն Գերմանո-
սի նեղուած ու շուարած կերպարան-
ժէն։ Մինք ալ Վարազին զոհ եղողնե-
րուն պէս ընելով՝ անոր տղոցը այն
մականունը կուտամք՝ որ բնաւորու-

թիւններին կը յայտնէ։ Նաեւ, չորս մեծերուն ուրիշ մականուն մը այսչափ չ'էր յարմարեր. նոքա յիրաւի վայրի անասնոյ տղայք էին, եւ որոց վրայ արդէն կը տեսնուէին այն բնական միտումներէն շատը որոնցմով գաւառին սարսափ պատճառեց Հայրերնին։ Գերմանոս այնպէս չ'էր. այս տղուն սրտին մէջ գրեթէ բոլոր ներհակ որպիսութիւնները զարգացած էին։ Ասկէ զատ, նա պառաւ Դինային Բենիամինն էր, որ զաւկի պէս կը սիրէր եւ ամէն ժամանակ զանիկայ կը պաշտպաներ իւր եղբարց անյողդողդ յարձակմանէն. որոնք վստահ ըլլալով որ Հայրերնին Իրենց թեր կ'ելնէ, զանիկայ միշտ չարչարելով կը զուարճանային, եւ մինչեւ անգամ կը ծեծէին ալ։ Խեղճ

տղայն այս սոսկալի խոչքորաց մէջ շատ դժբաղդ էր, եւ չեմ դիտեր մինչեւ ո՛ւր կը տանէր կը հասցընէր զանիկայ իւր յուսահատութիւնը, եթէ այն պատուական պառաւը քովը չ՚ըլլար։ Միայն Գերմանոսի համար յանձնառու եղած էր Դինա Վարաղին ծառայութեանը մէջ մնալու անոր կնոջը մահուանէն ետքը. նաեւ անոր համար էր որ իւր սոսկալի տիրոջը հետ շատ անգամ կը կռուէր, եւ սիրտ կ՚ընէր դիմադրելու։ Վարազն զԳերմանոս չ՚էր սիրեր։ Այս անոր համար կենդանի յանդիմանութիւն մ՚էր, քանի որ իւր միւս տղայքը, որոց իւրաքանչիւրն մոլութիւններէն մաս մը ժառանգած էր, սաստիկ կը սիրէր։ Դինա եւ Գերմանոս ասիկայ դիտէին, եւ ասոր համար

էր որ երբ Վարազն իւր վերադարձին առանն իմացընելու ըլլար՝ շուարեալ ու նեղեալ կերպերնէն կը ցուցընէին թէ նոյն լուրն իրենց հաճելի չէ։ Իսկ կնասարու նաւ իւր կրտսերացն համար ասոր հակառակն էր. Հօրեղբնուն վերադարձը նոցա համար մէկ ուօն մըն էր միշտ։ Ըրածնե՛րը պիտի պատմէր։ Ներքնակեցի մը չափ դղեկին մօտենալու անխոհեմութիւնն ընող անցաւորաց նշան առնելով աղէկ գործածել պիտի սովրեցընէր անոնց, ինչպէս ամէն անգամ կընէր։ Ուրիշ շատ զուարճալի-ներէ ալ կ'ուներ, յորոց միշտ զուրկ էր Գերմանոս։

Ընդ, խոչքորները Վարազ հօրեղբնուն ճամբան կը նայէին, որ նոյն իսկ այն առաւօտ պիտի գար։ Լուանա-

լեն՝ ի մեր պարապին վրայ եկած՝ դաշ-
տին հեռաւոր ծայրերը տնկեր էին աչ-
ուընին. բայց արդէն կէսօր էր՝ եւ
Զարաքը չ՚էր տեսնուեր։

"Զարմանալի՛ բան. — ըսաւ Կե-
ստը — . օրն ահա՛ կէս եղաւ. իսկ
հայրերնիս ըսած էր մեզ թէ արեւուն
ծագելէն ժամ մը առաջ հոս կ՚ըլլայ
. . Թերեւս թագաւորին մարդոցն
հանդիպած է, եւ մէկ քանին գերի
առնելով հոս կը բերէ որ նեռաձգու-
թեան պարժեցընէ զմեզ . . .

— Կողոպտելու անցաւոր, կամ
ոգքատաց համար ողորմութիւն ժողված
եւ դարձող կրօնաւոր մը, կամ հարկ
ժողվող մը գտած ըլլալու է։ Մեք ալ ա-
՛նոր ըրածները պիտի ընենք հէ՛. . . —
յարեց Սլեթրա՝ խոշքորաց երկրորդը։

— Ամբ գիտցար, — ըսաւ Գաստոն՝ որ երրորդն էր. — ես դրաւ կը դնեմ որ ինք այս վայրկենիս աղէկ ուտել խմելու վրայ է . . .

— Ամենեւին. նա Հանգստութիւնը կը նայի . . . եւ իրաւունք ունի այնպէս ընելու. — յաւելցուց Կարոլոս՝ որ արեւուն մէջ երկնցած կը յօրանջէր . . . — Ի՞նչ աղէկ է բան մը չի գործելը։

— Ես, — զրուցեց կեսար— . երբ աղէկ մը մնծնամ եւ պէտք եղած ժամանակ հօրս օգնել կարողանամ, որ յոյս ունիմ թէ շատ չ'ուշանար կ'ըլլայ, այն ատեն բոլորովին երջանիկ պիտի ըլլամ, բոլորովի՛ն . . . Հոգս աղեղ մ'առնելուս . . . դէպ 'ի մէկը շիտակելուս սիրտս կը զարնէ, եւ երբ

նգաստակին հասցընեմ և ընկնելը տես-
նեմ՝ ուրախութիւն մը չեմ զգար։

— Ես ալ անանկ եմ։ — յաւել
ցուց Ալբերտ։ — զրպանդ բոլոր
ունցածներդ վերցընելով զուարճա-
ցած առնես։ . . եթէ դուն չի տե-
սած յաջողցընեմ . . . դոհ կ'ելլամ . . .
Ընդհակառակ ամէս հայրս հոս եղած ժա-
մանակ ուրշոք խնդացինք . . . քանի
վերցուցածներս կը բնաւէիր, առանց
կասկածելու թէ ես առի . . . Հայրս
խնդալէն աթոռին վրայ չէր կրնար կոր
հանգարտ նստիլ . . . Ա՜խ։ մէկ մը
մեծնամ, տակառներով ոսկի պիտի
ունենամ . . . ոսկի։ քանչ աղուոր
բան է։

— Այո։ աղուոր է, — բաւա-
գնաւոն, — բայց երբ ամբողջ զի-

շեր տեղ հացկերութի գործածութի, ինչպէս որ հայրս հոս եղած ժամանակ կ'ընեմք . . . կ'ուտեմք . . . կը խմեմք . այլ վերջը չի գար . . .

— Ընտարակիս ախորժելի է այդ . — զրուցեց Կարլոս՝ որ միշտ տաբաթածուած կը կենար . — բայց շատ գնելու է . հայրերնիս ամիսներով դուրսը կը մնայ , և երբեմն կը լսեմ ըսելը թէ՝ շատ տաժանելի գործ է գոնածը . . . Ես , երբ մեծնամ . . . Ամբուն մէկ կողմը երկընտաւ պիտի այն մուրացկանին պէս՝ զոր անցեալ օր տեսանք . . . քովս ալ ապեղ մը կ'ուենենամ . և եթէ անցորդն ինձ բան մը չի տայ . . . նեռս մը կը թըրցընեմ վրան . . . առանց խակ երեսը տալու :

— Խոշքորներ, խոշքորներ. ոգո-
չից կնկան բարակ և անճոռնի ձայն
մը՝ աղրցմէն երկու քայլ հեռուէն...

Ա՛յս Դինան էր, որ անոնց սար-
սափելի խօսակցութիւնն ունկնդիր
էր եղած։

— Ա՜յ. դուք յիրաւի Վարազին
աղայքն էք. — պոռաց երեսնուն՝ նի-
հար բազուկն անոնց երկընցընելով.
— Հա՛. ամէնքդ ալ հօրեբնուդ ձեզի
անցուցած եղեռնագործութեան հա-
կամիտութիւն ունիք...

— Խարձեալ Սկովտուհւոյն խել-
քը փախուցած ատենն է ահա. — ը-
սաւ կեսար խնդալով և մատով զա-
նիկայ եղբարցը ցուցընելով։

Յիրաւի. պառաւ Դինան երբեմն
չափազանց գութ մը կ'ունենար այս

ժանչերուն վրայ, այնպէս երեսի ձըգ-
ուած և մանկութենէ 'ի վեր ոճրա-
գործութեան իբր թէ նուիրեալ տես-
նելով զանոնք. բայց այս գուրթը
դարձեալ զգացած տհաճութենէն
քիչ էր։ Այնպէս որ նախ այս վեր-
ջի զգացումը կը յայտնէր, ապա կո-
ղբատեան խորխորատէն հեռացընել
կը ջանար։

— Այո՛. — գոչեց. — իրաւ խենթ
եմ գազանների դադար մը ասանել
կենալուս համար... բայց ձեզի հա-
մար չեմ կեցած... չէ՛... Գերմա-
նոսի համար եմ նստեր... որ ձեզ
չի նմանիր... փառք Աստուծոյ...
Գերմանոս, տատանանների մէջ հրեշ-
տակ մ'է նա...

— Օ՛. Գերմանոս, ըստ Կեսար.

անխելքն ադեղ մ'անգամ բռնել չը գիտեր . . ,

ԱԼԲԵՐՏ. Ընանց մէկուն տեսնելուն ոչինչ բան մը իսկ վերցընել ձեռքէն չի գար . . .

ԳԱՍՏՈՆ. Ընպուշը . . . փորը մէկ մը կշտացաւ մի , ալ այնուհետև բերանը բան չի գներ :

ԿԱՐՈԼՈՍ. Ռախտուկ է . . . քիթը անկած ամէն ատեն կը կարդայ , և խենթութիւնները սովորելու հավար կը հոգնի ու կը հոգնի :

ԿԵՍԱՐ. Ընհա դարձեալ այն գին պատուարին վրայ նստածին՝ ա աստուածաշունչն է բռներ ձեռքը , զոր հայրերնիս՝ չեմ գիտեր ինչ խելքի ծառայելով . . . արքայական կողոպուտէն առաւ բերաւ . . .

ԱՄԷՆՔԸ. Ան՝ է... Գերմանուհ. օ, օ...

Եւ զանիկայ կը ծաղրէին. արդէն ալ անոր նեռելու համար քար կը ժողվէին կոր, բայց Դինա վրանին վազելով՝ պոռաց.

— Ողորմելիներ. ի՞նչ պիտի ընէք... եղբայրնիդ զարնել։ Ինձի մոլիկ ըրէք. ես Սկովոտիայէն եմ. իմ երկիրս ալ կան աւազակներ՝ որոնք լեռներէն գաշտը կ'իջնեն, կը մեռցնեն ու կը կողոպտեն. բայց մէջերնին ձեր ընելիքն ընելու կարող մէկը չի կայ... չի կայ մէկը՝ զորս դուք եղեռնագործութեան մէջ հազար անգամ գերազանցած չ'ըլլաք։

ԱՄԷՆՔԸ. Խնդալով ու ծաղրելով. հա՜հ, հա՜հ, հա՜հ։

- Սակայն եթէ ուզէիք՝ ամէն յոյս չէր կորսուիր . . . Ձ՛ոլ գլխէ հանողը շատ օրինակներն են . . .

Նոյն՝ իբր թէ ինքն իրեն խօսելով՝ յաւելցուց . — Խնդրս տղայք. առաքինութեան անուն անդամ ակնչեն չեն հասուցէր . . . Ս յն . ապէտք է որ զանոնք անդունդէն ազատիմ . և Սատանայի երեսատրդութեան մէջ քանի շատ գործերուս կը նիրէ . . . Մանկ ըսէք . կ՛ուզէք եռեւէս գոլ . զձիգ հեռու հեռու տոլոր մը պիտի տանիմ , և քանի մը գիտնական կրօնաւորաց պիտի յանձնեմ , որպէս զի զԱստուած և առաքինութիւնը ճանչի սովորցնեն ձեզ . . . Սկէք . եկէք

Ըսաւ , և կնոջը ձեռքէն բռնելով պարտէզ տնոր քաշել կը ջա-

նար։ Նոյն վայրկենքն այնպէս ներ-
շընչեալ կերպարանք մ՚ունէր՝ որ խոչ-
քորներէն ուրիշ ոմ ըլլար՝ վրան ազ-
դեցութիւն կ՚ունենար. բայց ասոնք
սկսան բաթերաձայն ծիծաղել։

— Ո՜հ, ո՜հ. կը տեսնէք սա ցնդած
վհուկը. — զրուցեց Հեսար. — մեզ
տանիլ կ՚ուզէ, բայց բարեբաղդաբար
հայրերնիս պիտի գայ... այն ատեն
ասոր դիտաւորութիւնները կը պատ-
մեմք անոր։

— Ծա՛կը կը նետէ, ինչպէս որ
արդէն ըրած ունի. — ըսաւ Ալբերտ.
և Դինային մօտենալով կռուփը ցու-
ցուց, և կը կրկնէր. — Պառաւ ջա-
ղուկ...

— Դէք, մե՛ք սուքիայ բանտ
դնեմք. — յարեց Գասատն... —

չուան ունի է . . .

— Այ . . . չէ . — շարունակեց կարդալս ճապկոտելով : — Հօրիրնուս սպասեմք . . .

— Հա՛ . ասուն ապէկ կ'ելլայ . . Հօրիրնուս սպասեմք . . . Նա խելը կանիծէ անոր . — գոչեցին ամէնքը մէկ բերան՝ պատա. Վինային սպառ. նալիքներ ընելով :

— Ո՞վ զրուցեց ձեզ որ նա պի. տի գայ : — ըսաւ կիներ , որ միշտ ներշնչեալ կերպ մ'ունէր . — ո՞վ զը. րուցեց ձեզ թէ այսօր անոր վերջին օրը պիտի չելլայ . . . ո՞վ ըսաւ ձեզ թէ Ղ.ստուած անոր եղեռնագործու. թիւնները վերջապէս ճանձրանալով զանիկայ իրեն կոչել արժան դատած չէ . . .

— Ո՜հ . . . ապէ՛կ . ապէ՛կ . . . ասինը զոյ նէ՝ հետդ կը խօսիմ . . . — ըսաւ Ալբերտ .

— Եա , — գոչեց Կնաստ՝ աչքերը բարկութենէն կրակ կտրած . — ես կը պնդիմ որ դու ստախօս մէկն ես . և նորա գալուն այնչափ վատահ եմ , որչափ լաւ գիտեմ որ ապեղիս նեռն է՝ Գոնսալոսին ձեռքի գիրքը պիտի ծակիմ . . . ,,

Խօսքը լմնցուց , զէնքն ալ չիտակեց . նետը թռաւ , և գնաց դրքին վրայ մխեցաւ . մաղ մնաց Գոնսալոսի երեսն ալ կը վերաւորէր , թէ և այնչափ հեռուն էր նետուած . Ս. յուրանն ասուանկ շուտ եղաւ՝ որ Գոնսալ չի կրցաւ դէմ դնել . Գոյնը նետեց , քիչ մը զողզողաց , յետոյ շարխալաց

զայրացման դիրք մ՝առնելով շեմեցաւ ; եւ բազուկները զէպ՝ ի պատանիներն երկնցուց՝ որոնք ծափ կը զարնէին՝ ի նշան յաղթութեան։

,, Կնցցե՛ս . — պոռացին երիք կրտսերները՝ մեծերնին գովելով։

— Ի՛ տեսնենք . դո՞ւ ինչ կրսես՝ կա՛խարդ . — հարցուց Կեսար հեգնական կերպիւ մը ,, ։

Ղենայ՝ դէմքը վարանած էր , եւ աչուքները կը վառէին կոր։

,, Կախա՛րդ ըսիր . շատ աղէկ . հա՛ . կախարդ եմ . . . այո՛ . ձեր ամենուրդ ալ վիճակը դուշակելու շատ կախարդութիւն ունիմ . այո՛ . . . ձեր ապագայն վիճակահանին մէջ կը կարդամ։ Դուն , Կեսա՛ր , աւազակի տղայ աւազակ . դուն ժարդ պիտի

ժողովրդեան եւ դու ալ ապաննուելով Աստուծմէ պատիժդ պիտի ընդունիս . . . Դո՛ւն , Ալբերտ . ոչի՛ դողութեան . . . դո՛ւ ալ պիտի կախուիս . . . Դա՛ստն , որկրամոլութիւնը , գինովութիւնը եւ միւս բոլոր մոլութիւնները քեզ դեռ տարէքդ չառած գերեզման պիտի ղրկեն : Իսկ դուն , Կա՛րոլոս , բոլոր նեղութեանց եւ աչխատութեանց թշնամի . դու ալ վատ եւ ծոյլ մէկու մը պէս ծուլութենէ պիտի մեռնիս . . . ահա ուննալու վիճակնիդ , թէ որխորխորատէն չերնէք .

Ալբերտ գնտնէն փայտ մը առնելով Սկովտիացւոյն վրայ վերցուց եւ ըսաւ . — Ե՛ս , Ե՛ս . կօգտէ . անխելք .

Կեսար շուտ մը եղբօրը թեւէն բռնելով՝ ըսաւ . — Կեցէ՛ր . սա չարագուշակ կախարդին Գերմանոսի հաճար ըսելիք վիճակն ալ լսեմք . . .

Գինա առանց շփոթելու շարունակեց . — Գերմանոս ամենէդ ալ շատ պիտի ապրի , և իւր մաքրասիրութեամբը և առաքինութեամբը իւր անուանն արժանը մաքրէ պիտի . և ամէն մարդ պիտի մոռնայ որ այն ալ ձեզի պէս Խոչքոր մըն էր . . .

Սկրմիտիացւոյն քովէն անուշ ձայն մը ելնելով պատասխանեց . — ամէն :

Ս՝ իւանները գոչեցին . — ա՛հ . Գերմանո՛ս , Գերմանոս :

Ը. յո՛ . պարոնայք . ըսաւ Գերմանոս իւր երկուսանամեայ հասակին չվայելու ծանրութեամբ . (ունանկ ըն-

կերութեան մէջ այսպիսի ծանրութիւն շատ կը տեսնուի)։ — Ես եմ. Ձեր եղբայրը, իրեն վրայ նետած նետերնիդ դարձեալ ձեզի բերող Գերմանոսը ,, ։

Լռեցը Գինայի դառնալով՝ ըսաւ։

,, Բարի տիկին. շնորհակալ եղա՞ր ասունցմէ. թէ որ քիչ մը վար նշան առնէին՝ զիս կը մեռցընէին ,, ։

Պաղութեամբ մը նետը տուաւ, և տեղը երթալու վրայ էր՝ երբ յանկարծ Կնաստր գոչեց։

,, Տե՛ս. ահա նետ մը՝ որ քիչ մը-նաց զիս պիտի զարնէր. նետ ալ չունէր քովս, և սա վարը ծենգաւոր մը կտեսնեմ որ մեծ մեծ քայլերով գէպ 'ի մեզ կը մօտենայ։ ։ ։ պէտք է որ անկէ ունեցած աւարս հօրս ցուցընեմ երբ որ գայ։ ։

— Թե որ գայ · — կրկնեց Սկովատու հին։

Կնաստ զայրագնութեամբ գոռաց · — Հարագուշա՛կ թոշուն · քու այդ գէշ գուշակութիւններդ չպիտի ազատուն այս խեղճ անցաւորը ,, ։

Ա. յս ըսելով նստաը շիտակ մարդուն վրայ շոկեց , որ վանական ըզգեստ հագած և զլխարկը գլուխը քաշած՝ շուտ շուտ առաջ կերթար ։

,, Դերմանոս կուարու ձիուքէն բռնելով գոչեց · — կեցի՛ր · թշուառ ողայ · այդ մարդը քեզի ի՞նչ ըրաւ · · · կենացը խնայէ · · վանական մըն է · · · ·

Վանական ըլայ , ի՞նչ կըլայ նէ ըլայ · — գոչեց Կնաստ բարկութեամբ , և խստութեամբ Դերմանոսն հրեց՝ որ

գնաց պատուարին վրայ ընկաւ։ Ցէտք է որ զարնեմ։ ։ ։ և այս մեծ գործը հօրս պիտի պատմեմ երբ որ գայ։ ։

— Ինչ որ գայ։ » կրկնեց զարձ. եալ Սկովտուհին։

Կեսար բարկութեան շարժուեմ մը ընաւ և աղեղը նորէն լարեց։ Լարը թուլցաւ, և ուժգնութեամբ նետուած նետը ճիշդ գնաց զարկաւ այն մարդուն արտին՝ որ արդէն դրեթէ պատուաբաց տակն հատած էր։ Մարդն ընկաւ, և ընկած ժամանակը գլխարկը դլխէն կիսելով նրանցի Վարազին դէմքը ցուցուց։ Ամենն առաջ Սկովտուհին ճանաչեց զանիկայ։

,, Այրասպան, հայրասպան — գոչեց Դինա։ ։ ։ — Խոչքորը Վարազը զարկաւ։ ։ ։ Ես չըսի՞ մի որ ողջ

ջղիտի գայ ... ։ Աստուած զանիկայ նոյն իսկ իւր գործքերովը պատժեց։ Ձեր գեղեցիկ սրտին մէջ ոճրագործութիւնը անիկայ սերմանեց որուն պտուղը հիմայ կժողվէ ... Տէր Տէր։ մեծ ես և արդար։

Այս լսելու առենը սկոմտուհին իւր կիրպարանացը վրայ վեհութիւն մ՚ունէր և կարծես թէ Աստուծոյ վրէժխնդրութիւնը իմացընելու եկած հոգի առնող հրեշտակն էր։ Խոճկորակները ապշութեամբ իրարու երես կը նայէին։ և ահա յանկարծ հովուհան սընգի բարակ ձայներ լսուեցան։ Վարազն էր այս և օգնութեան կը կանչէր։ Խոչքորքը պատուարէն ինքան և Ֆինա, որ հեռուընէն գացած չէր, կրցաւ հեռուն խմբեր տեսնել՝ որոնց

զինքը՝ արեզակեան շառաւիղներէն կը փայլփլէին, և բնակիչքը՝ որ արագ արագ գէպ 'ի դշուակը կուգային։ Այս տեսանելով Գերմանուհին վազեց և ետ առանգուն կերպով մը ըսաւ. «ապոյ՝ պէտք է փախչիլ... զդուակը պիտի առնեն... Եւ բոլոր մեջենները պիտի մեռցուին... Երդաբ վրէժխնդրութիւն... Բայց զինուորքը չպիտի կրնան ցրտենք որսալ զատել... Եկէ՛ հետս։

— Ո՛չ բարեկիրս Գինա՛ ոչ... գուշակութիւնդ պիտի ճշդուեմ... Այս երկիրս պիտի կենամ, և կուզեմ որ ինձի ալ ուրիշներուն պէս տաւած խոշոր անունին ինձմով պատուելի անուն մ'ըլլայ... Պիտի կենամ դ տեղացուց հասատուութեամբ։

Սկսեցուցին պարոյ Լանգը կը ճգնէր անոր միտքը փոխելու, երբ իմացաւ որ զինքը մէջքէն բռնած պատուարներէն վար կը քաշեն։ Ասոնք էին Կեսար և Ալբերդ, որոց հրամայած էր Վարազը որ պառաւ կինը իրեն բերեն։ Բայց ժամանակը անցած էր. երբ հրամանը կատարելու քովը գացին՝ միայն շնչասպառ դիւն գտան։ Ինվէրնացի Վարազը հազիւ ժամանակ ունեցած էր իմացընելու որ բազմաթիւ զօրքեր իւր խումբը ջարդեցին, և քիչ մնաց որ զինքն ալ բռնեն, և թէ՝ շուտ մը այս կրօնաւորի զգեստն հագնելով առտուաւանէ՝ ի վեր գրեթէ քսան անգամ մը մահուանէ ազատած էր։ Ցկեսարու շնորհակալութիւնս էր որ զինքը կախաղան չելնելէն ազ-

զատանց և տղոցը փախչելու խորհուրդ տալէն վերջը Դինայի գէշ գուշակու-թիւններն իմանալով՝ հրամայեց որ իւր քովը բերեն և մեռցնեն. քայց իւր հոգին ելած էր.

— Կեսար ներս մտնելով գոչեց. — մեռաւ... Բարեկամք, հրամանը կատարեցէք... և այս վհուկը...»

Ասկէ աւելի չի կրցաւ ըսել. գոռումը, եռեւէն մարդոց և երիվարաց ոտնաձայնը ելն է փրթաւ. Հողաղակները աղաղակեցին կուտային, և ալ կատածելու տեղի չի մնաց որ դղեկին վրայ կը յարձակին. Խօսքի բռնուելով պառաւ Դինան մոռցան. Զորան ալ իրարու քով եկան, նոյն իսկ Կարոլոս ալ իւր անչափ ծուլութեամբը.

« Կեսար գոչեց. — փախչինք, եղ-

բարք։ փախչինք . . . Նիթէ ոչ զին-
ուորք զմեզ կը մեռցնեն . . . Ամէնք-
նիս ալ մէկ մէկ ճամբայ բռնենք , ահա
Հօրերնուս հրամանը . . . Իւրաքան-
չիւրքս ուզածներնուս պէս մարգու մէջ
մտնենք . . . բայց որպէս զի մէկ-
մէկու երեսէ թոլորուին հեռու չը-
մնամք . . . ամէն մէկներնիս հինգ տա-
րիէն այս 1580 ամի 15 մայիսի օրը
Նըմէրի գլխաւոր հրապարակը ջը-
նըուիմք ։

Ալեքսիդ նուանդեամբ մը ըսաւ ։—
Շատ լաւ . հինգ տարիէն . և հինգ
տարիէն հինգ տարի այնպէս ընթցը
շարունակեմք ։

— Հա՛ . հա՛ . պոռացին Գասատոն
և Կարոլոս ։

— Ո՛ամբոյ երթամք ։ ։ ։ և ժամա-

դէր տեղը գալու հեղգացող մը չէլլար մէջերնիս ... ուելցուց Կեսար դուրս ելնելու պատրաստուելով ...

— Կեսար .. մէկը պիտի պակսի ..

„Շուարած կնիկ ...“

Կեսար եւ դառնալու կը պատրաստուէր կոր ։ բայց մէկ ուելի մօտ պաղակ մը խուզբոլները փախչելու բա-տիպէց ։ Մութ եւ գաղտուկ տեղք մը մտան, զոր հայրենին ցուցուցած էր իրենց եւ թէպէտ եւ խորունկ էր, բայց այսու ամենայնիւ Դինայի կանացի ուրբ ձայնը կը լսէին՝ որ կը գոչէր ։

— Խուչքորք խուչքորք ։ մոլութիւններ ունիք որք թող չեն տար ։ ։ ։ գուշակութիւնս մի՛ մոռնաք ։ „

— Սակայն գշեակը ձեռք անցած էր ։ սկսուտ Հին Դերմանոսը կը հոգար բայց

պատրաստ տեղը կը բընտրուէր զանիկայ. զանելն անկարելի եղաւ. Սիրտն ան-հանգիստ և կուտրած ըլլալով այն ա-նիծեալ դիպուածին առնչակից առակը մեռ-նիլ կուզէր. բայց յանկարծ բան մը միտ-քին ինկաւ, և ինքն իրեն ըսաւ.

— Ա՛հ . . . ուշ . . . կ՚ապրիմ ոչ-պէս զի պատուոյն անկանելու ըլլամ։ »

— Այս ըսելով ծածուկ ճամբան ան-պատեց։ Վաղուընէն ոչինչ հնուանալով շատ մը քալեց. բայց բարձր տեղ մը հասնելով դիպակը աչքէն անցուցի ըլլալէն առաջ մէկ ժ՚ամ առնանք ու-զելով հոն դարձաւ . . . և տեսաւ որ բոցերով բորբոքեալ հնոց մը ան-դամներ։ . . .

— » Ասուածոյ վրէժխնդրութիւնն ակնարաւ » գոչեց, և հնոցաւ.

# Ը.

## ՈՐՍ ԽՈՃԿՈՐԱԿԱՑ

Նախնեաց գլխոյն վերջ առաղ դէպքերէն հինգ տարի հարք Նըվէրի հրապարակը՝ զոր ժամադիր տեղի ո. ըոշած էին Խոշքորքը, սովորականէն աւելի բազմութիւն կար։ Բազմաթիւ մարդիկ կը ժողվուէին, խօսակցութիւնը կրակոտ, և խօսակիցներէն մէկ քանին նոյն իսկ ապառնալիքներ ընել կը թուէին. ամէնուն վրայ բարկութիւն կար։ Այդ գայրացմանն առարկայ թշնամին Խոշքորաց եղեցը Կնատան էր, որ հինգ տարիէ հետէ իւր Ս տրաց հօրմէն աւելի սասկալի աւազակ ու ՝ըլլալով, և Դինայի վրէժխնդրութիւնք մոռնալով գաւառը անա-

պատ կը դարձընէր։ Բայց Սկովտու-
հին նշանակեալ ատենը մոռցած չէր։
և Պ. Վ. Իրակացուին իմաց տուած էր,
որ Նըվէրի մէջ եղած բոլոր զրքը ոտ-
քի վրայ հաներ էր։

Ընդհարդ, և իբր Կարոլոս մուրացիկ
եղբայրը ժամադիր տեղին հասած էին։
և քիչ ատենէն իրենց կրտսեր եղբօրն
համար եղած թշնամական պատրաս-
տութիւնները տեսան։ և իրարու նը-
շան ընելէն ետքը հրապարակէն քիչ
հեռի պզտիկ սակաւամարդ փողոց մը
գացին և Ֆաուստն ալ հոն գտան, որ
քովը շատ մը գարիէ նկանակներ դրեր
կուտէր, և վզէն կախուած մեծ շշի
մը մէջինովը կը թրջէր։

Ընդհարդ գոչեց. — անգութ վհՆուկ.
իբր երբորդ եղբայրը ճանչցուծին պէս

Սարակոյս մեզ յայտնեց . . . և ոչոր այս վերակացուին գործակալաց տաքի վրայ հինելը առաց դիտաւորութեան չէ։

Գասատն հարցուց. — իսկ կնոջն ինչպէս է.

— Ես գիտեր. բայց վայ զլխուն թէ որ քարտաքը մանէ։ Անշուշտ բոլոր այս ջանքը ամոր համար է . . . Այս հազիւ հազ կը ճանչցուի այս քարքիս մէջ. զի շատ շատ երկու, երեք անգամ բռնուած եմ այս տեղ։

— Այս ալ չեմ վախնար. բաւ Գասատն։ Այս ալ՝ հոս միտակ կերակուր ուտելու համար եկած եմ . . . և միշտ ուրիշ տեղէ ճարած սատկովս վճարած եմ։

Կարդոս բաւ. իմ ալ հոգս չէ . . .

ես հոս իբր պարիզը մուրացիկ մը ծանր-
ցուած եմ . . . և ձեռքիս եկածն
սարիշ բան յաջշատկած չեմ ։

— Ընդերդ շարունակեց . բայց նե-
տար . . . խոնարհը կորուած է , թէ
որ ՝ՆՐՄԷՐ գայ . . . իրեն մեծ գործ-
քերը հոս գիտեն . . . ՝Ցանկ մոռ ա-
տենարս՝ վերակացուին տղան ապանեց
զոր ձեռք անցընելու համար չէին ա զեր
փրկանք տալ . . . Բայց այսու ա-
մենայնիւ կը յուսամ որ չի գայիր
ի՛ս զատի ։

» Խումբը վշտացնալ կերպիւ գո-
չեց . — զՆիատ ազատել և պէտք է
գործ տեսնել ( դիտելի է՝ որ Ընդերդ
գէթ բարութիւն մը ունէր իր ան-
գութ եղբայրը հոգալովը ) . պէտք է
ապագայէն զգուշանալ . . . Եայս ալ

ձևը երկուքէն մէկին ընելու գործն է . . . Իսկ ես հիմայ չեմ կրնար, իմացայ որ Հարուստ Կարբոնը՝ որ քաղքին արծաթասէր վերակացուն է, ճամբորդութեան մըն է ելեր և ցորենկուընէ առաջ ունեցած ժամանակս պէտք է անոր երկաթեայ սունտուկը աչքէ անցընելու գործածեմ։ Ինչպէս ամենէն առաջ պէտք ըլլալու գործքերը . . . Կարոլոս էլ գնաց այն անտառը՝ ուր թեւերս կը գտնուի Կեսար . . . և . . . »

— Կարոլոս պատասխան տալու տեղ երկայն մը պառկեցաւ, և մռմռաց։

— Ցրնքը փարատէ . . . շատ հեռու է չեմ երթար։

— Աղբերդ ինք իրմէ ելնելով գոչեց դանդաղ կով։ Իսկ դու Կնամոնթ, չե՞ս

ներթար եղբայրդ մահուանէ ազատելու։

— Գասան պատասխանեցէ՛ . . .

Ընթայ դարձ պանդոկը կ'երթամ, ուր տեղի խահանոցէն ելած գոլորշիքը խորձակ աջիս յարմար բաներ կաւելտեն . . . Կեսար թող իւր գլխուն ճարը տեսնէ . . . Իսկ ես ցորեկուան հացս ուտելու կերթամ . . . թէ որ քու փարդ ալ անօթի է՝ եկու զիս հոն գըտիր . . . Մնայք բարեաւ։

Այս ըսաւ և մեծ մեծ քայլերով ելաւ գնաց։

— Ո՛ւրկրամոլ . ըսաւ Ալբերդ ելնեմ ես . . . Բայց ես ալ այսպէս յարմար տեղ մը։ Ձեռքէ փախցնել չեմ ուզեր։ Կարբոն արծաթեղինաց վերակացուն։ . . . Ասուած Կեսար էր ալ հպանէ։ » Ըսաւ Կարբոնի տուն

երթալու համար մէկ քանի քայլ առաւ։
» Գոռ » գոչեց բոլորնէն ձայն մը։
— Այս լսելով ետին դարձաւ և բարձրահասակ պառաւ մը տեսաւ որ կարմիր երկայն զգեստներ էր հագած։
» Սկսիր հիմա է, գոչեց։ — Թէ՛ չուտաղ մեզ վերակացուին ծախեցիր հէ՛ ։ ։ ։
— Ո՛չ։ Ա՛լբերդ։ քեզ չէ։ քու երկու անձնատէր եղբարդդ ալ չէ։ ։ ։ որուն մէկը կը բնաւոյն և միւսը կուտէ։ այլ Կնարը ձեռքս տուի ։ ։ ։ և հիմա քաղաքապետին պահապաններուն հետ կռուելու վրայ է ։ ։ ։ զի իւր խօսքովը քաղաք մտաւ ։ ։ ։ Սա հրացանի ձայնները կը լսեմ ։ ։ ։ ահա այն քու եղբօրդ է, Ղզոր։ որսալու ելած են ։ ։ ։ հիմայ գնա ։ ։ ։ Կար-

բան արծաթեայ ատուանը։ ։ Ընտ-
ուած առայ դուն ալ հոն գանես ամբող-
դործութեանցդ պատիժը։

Շնորհակալ եմ։ — ըսաւ Ելքերդ
պաղութեամբ և անտրեւութեամբ։
— Իսկ Սիրոլատուհին դողդոչուն ձայնով
մրմնջեցաւ ։ ։ Խոչքոլք խոչքոլք
ահա Ընտուծոյ վրէժխնդրութիւնը
սկսաւ։ »

— Այնքան առանձին փոքրիկ փողոց մը
քաշուեցաւ։ Ան, ոչն առանը, որպէս թէ
ոնար անյայտ ելլալը սպասէին, այլ-
օրինակ զգնատարեալ ձիաւորներ գո-
ռալով փողոց նետուեցան։ Գլխաւոր-
ին անշընորհ պատանի մըն էր, ամբ
ձեռքով անտաւոր հրացան մըն էր
բռնած և միւս ձեռքովն ալ ծանր թուր
մը։ ոյս պատանին էր Կարար։ մեծ

խաճկորը։ Իւր խումբը հետն էր բերեր վասն զի լրտեսներէն իմացած էր քաղաքապետին պատրաստութիւնները, և փորձի ձեռք զարկած էր կռիւ բռնելու։ Այս կռիւը մինչև առն ատեն տնչեաս եղած չէր. վերատեսչին պահապանները մէկքանի անգամ վանած. և եկեր այս փողոցն էր ապաւիներ որկեց կրնար շուտ մը հրապարակ յարձակիլ։ Բայց մտաւ չի մտաւ՝ քաղաքապետին պահապան զօրքը երկու կողմէն երեւցաւ, և կռիւն աւելի ասատիկ սկսաց։

— Սիրա առէք, տղա՛ք. — գոչեց Կեսար՝ բարկութենէն փրփրելով. — ուր ելէք. թող մեռնի քաղաքապետը։

— Ի՞նչ քաղաքապետին մտրդիկը. գոռաց բոլոր խումբը, երբ վերատես-

չին զօրքերը հազարաւոր գոռումներով — 'ի մահ աւուզակները. օրէ՛ քը զօրանոց — կ' կրկնէին։ Վերջը հրացանաձգութիւնքը կրկին սկսան հայհոյութիւններով։ Ինչ սոսկալի և ահռելի կռիւ էր այն . . . Զաւտպանութիւն ալ յարձակմանը պէս խիստ եղաւ։ Կեսաւ աւելի ոդէկ բանելու վայելուչ քաջասրտութիւն և անվեհերութիւն ցուցընելովը՝ հարուածները կրկնապատկել կ'երեւէր։ Ոռնչիլը և աչուրներէն բոցեր ցայտելը, և մահը ոտք ն տակն առնելը անհաղթ անիկայ կըրնար առիւծի համանցընել։

Բայց այսու ամենայնիւ միշտ կը կրկնէր ո՛ի մահ քաղաքապետին մայ դիկը. ո՛ հրացանի հարուածները կը գոռային և արիւնը վտակի պէս կը կաղէր։

Ամենեն աւելի սար վրայ չիտկուած էր պահապան զօրաց հրացանը։ Հապա քաղաքացիները դէմ առ դէմ անոր հետ կռուած ալ էին։ բայց գրեթէ ամենաւն ապ յանդգնութիւնը իրենց ծանրի նստաւ։

Սակայն նոյն փողոցին մէջ աւրիշ բան մը կ՚ըլլար կոր։ Կարոլոս մաւրացիկը, որ հոն պառկեր էր, գոռումներէն և աղաղակներէն արթընցաւ, բայց ձիերուն ոտքին տակը գընացաւ պարապ տեղը ձայնը հանելու կը հոգնէր. ոսկրները կոտրտած, մահուան դռուը հասած, բոլորայն կատղած պատերազմիկ խըմբին ոտնակոխ եղած, մահը առաջը կը տեսնէր, և ազատելու յոյս չունէր։ սակայն անլուր ճիդովմ ը ձիերուն մէջ ջոկեղէն քը

ուելով առաջ երթալու յաջողեցաւ, մէկ քովի փողոցիկը մտնելու փոքր փորձեց ուր Ֆինա քաշուած էր . . . Պարապ յոյս . խըստերախ ձի մը երկու ոտքերովը կուրծքին զարկաւ և դարձեալ գետինը փռեց։ Խեղճը ա՛լ բան մը չէր տեսներ, միայն թէ ոտկալի դղրդիւն մը կը լսէր, և

— „Կեսա՛ր . եղբա՛յր իմ . . .“

մռմռալով մարեցաւ։ Նա յիրաւի . նոյն իսկ Կեսարու ձին էր որ այս վերջին հարուածը տուաւ իրեն։

— „Ո՞վ էր զիս կանչողը . . . ա՜հուն տուողն ո՞վ էր . “ դոչեց աւազակապետը՝ թուրը ճօճելով . վերջը թամբին վրայէն ցռեալով՝ իւր կրտսեր եղբայրը ճանչցաւ։

— „Կա՛րոլոս . . . թշուառ ի՞նչ կ՚ընես

հոգ... քաջասիրտ մէկու մը պէտք-
ված կռուելու տեղ՝ վատ մարդու պէտ-
ք չը քնանաս... մեռի ուրեմն. Խոչ-
ոտը իւր ընկերութեան մէջ վատ
մարդ չ'ուզեր։"

Այսպիսով անցաւ առանց այլ իւր
եղբայրը հոգալու, որուն ամէն կողմէն
արիւնը կը վազէր։ Ընդամենը խեղ-
ճը զինքը դատ, և 'ի զուր կը ճգնէր
ոչն վիրաները մառնելու, երբ քաշուէին ի-
մացաւ, և քիչ մը հոտը այն տհուելի
տեղէն հեռացաւ։ Սկսաւ հին էր որ
այս վերջին ծառայութիւնը կ'ընէր
անոր։

— Երբ ապահով տեղ ըլլալնին իմացաւ
ամամաց, "գթութիւն, Ղինա գ.թութ-
թիւն։..."

— "Ասոնց պարտակ տեղը գթու-

թիւնս կը խնդրես ... Հիմայ պէտք է որ զԱստուած աղաչես ... ինչու որ պիտի մեռնիս ... ազատել ուզիմ այնէ ձեռքէս բան չի գար ... քու ծուլութիւնդ է որ քեզ մահ պատճառեց։ Դա առաջուընէ նոյնը քեզի գուշակեցի ... անձնասիրութիւնը և ծուլութիւնք իմ տեղս վրայ խնդրելու յանձնառու եղան ... Թէ որ զԿնաբ զատելու փորձ ընէր՝ կ'ապրիր։ Բա՛ւ ած քեզի ամոթ է։ Շնորհէ ... ես քեզի համար զանիկայ կ'աղաչեմ։»

— Ոտքի վրայ իյնելու ճիգ մը ըրաւ դարտոս բայց սաժոմը իյնալով մեռաւ։

«Խեղճ այս անոք ինծանինէ։ Բաւ ինա Դիւցազնիկով վրան նայելով։ ամենէն քիչ յանցաւորն էր։»

Մենք դարձեալ կռուոց տեղին գամք։ Ազազիներուն առաջին բաղդաւորութիւնը մնացած չէր երեւեր. քաղաքապետին զօրաց թիւը շատցած էր և նոյն իսկ քաղաքապետն ալ եկած էր իւր ներկայութեամբը խրախոյս տալու համար։

Կեսարը, գրեթէ մինակ մնացած, վիրաւոր, սրիւնը կորսնցնելու վրայ ձին սաստիկ վազցնելով դէպ՝ ի այն փողոցը նետուեցաւ՝ ուր էր Ակու

„Կիսամուտիկ . . . գոչեց Կեսարը։

„Ուստուծոյ վրէժխնդրութիւնը . . . կրկնեց Դինա։

„Ինչու

անոր մահուանը պատճառը մոռանալ չ՚տուին։ Վասն զի զէնքը պոյծած էր։

«Ո՞վ ոչ ոքով զարնէ՝ ոքով պէտք մեռանի» զոչեց Սկովտուհին ձայնը այնպէս մը հանելով որ յառաջախաղաց զօրքերը զանիկայ տեսնելով կանգ առին։

Սկովտուհին անդիմադրելի։ Երդարուքեան առենի ապատուորնելը խոշքորին դիակը առին, և քաղաքապետը զինքը շուտ մը վերցնելու և զինեալներն ուղարկելու, և ճամբայները բանալու ամենախիստ հրամանները տուաւ։ Այս նախազգուշութիւններն ըլլալէն վերջ՝ բոլոր խուժդուժը յաղթանակաւ հրաշալի նկան, և Ալ։ քաղաքապետը բազմամիտ ժողովրդոյն ամենայն տուները տարուեցաւ։ Ամենախիստ թիւնները նշանաւորուեցան

և այն օրը Նոյեմբերի մէջ տան օր մը եղաւ։ Այս կռիւը Նրիլէրացւոց մէջ որս խանդոյթ անուն ունեցաւ շատ ատեն։

Բայց ժողովրդական ուրախութեան ժամանակը՝ Էլթերդ, Գասսոն և ընկերուհի Գոնան ի՞նչ կ՚ընէին։

Էլթերդ Գ. Գարբոն, արնաթափ ոգեղին ամենածանուկ խցիկ մէջ իւր կարողութենէն վիր ճչաց մէջ կը առաւարէր։ Օնիկայ կը տեսնէր երկաթեայ արկեղ քսիլը, ձեռքերը որոգայթով լրուած, բարկութենէն և ցաւէն կ՚ելլուէր՝ ձեռաբները երկաթէ կապէն ազատել ջանալով և կը գոչէր. «Խշու


մարդ... անուն ալ այս սարսափելի օրոգայթը ունի եղեր... Ձեռքս ոչ ոսկի երկնցուցած ժամանակս ասանկ ալ բռնուի՞լ...

քարոզաբանութեան կը բռնուիմ թէ որ գան՝ և գողի մը պէս կախուելու կը դատապարտուիմ... թէ ոտ մարդ չի գայ... անոթութենէ և տառապանքէ մեռնելու է հոս... Որ կողմ նայիմ՝ մահ կը տեսնիմ... ոչ. տես. Սկսուհուոյն բանն իրաւ եղաւ... նա որ գողութեամբ ապրեցայ և կ'ապրիմ, գողութենէ պիտի մեռնիմ... »

Ահա այս բար լակաս և բնակաս տարնանաց մէջ անցուց Աղբիրդ բոլոր կռուին ժամանակ. ա. կայն հրացանաց դառուժ հնուռուէն կը լսէր և իր գլխուն ապագայ պատահելիքներէն չէր կրնար պրծիլ... Բոլոր գիշերն ալ այսպէս պիտի անցնէ... մինչև որ... բայց ինչ պէտք է պատահելիքները ապաջուընէ պատմել. Դատարանին առիմքը

մէկ մ՚ալ որ անդարար ճաշի մը քով ազնուականի մը պէս նստած էր Ընթաց-
գրողի պանդոկին մէջ։

Խեղճը դուրը պատահածները ամենեւին հոգը չընելով չորս հոգւոյ համար պատրաստուած ճաշը միանակուկ մը ինք վայելեր էր։ Եւ զինքը բոլորովին որկրամոլութեան տալով մինչեւ իրիկուն սեղանին դլուխը նստած էր։ Եւ իրիկուն եղածին պէս ծանր եւ դողդոջուն քայլերով քաղաքին դռնէն դուրս էր ելած։ Ինչ իւր անտարոյն բնակարանը տանող ճանապարհը պարապ տեղը բնտռելով, ճամբան Նիկերի կողմն էր դարձուցած, եւ միշտ քալելով խորտուբորտ տեղ մը էր հասեր՝ ուր կար քառասուն տարի յայնութիւն ուշնեցող դիւռը։ Եթէ այն տեղն կարող

էր Գասատոն բնութեան գեղեցիկութիւնքը զգալ, եղած տեղուն շքեղանկար ազդեցութեանը կը զմայլէր։ Ընպառաժի մը վրայ բլուրք մը էր՝ որոնք քովէն կ՚անցնէր այն գետը Ղբվէրի միւս կողմը կար ասդիս անդին ծառեր անկոսած և իրարմէ հեռու հիւղեր շինուած դաշտ մը. երբ ներսերը կը նայէր տեսարանը սահմանափակելով մի՛ միայն լուանին լուսովը յուսաւորուած անառատախտ լերան մը գագաթը կը տեսնէր։

Ոյս վայրս էր Գասատոնի առանց ինքզէսը հասկնալու եկած տեղը. ալ աւելի առաջ երթալու անկարող ըլլալով գետոնը փռուեցաւ, թէպէտ և խոնջը վրան էր։ Ոյն առուն ձայն մը լսեց որ ոտքին քովէն գալ կը թուէր։ Սարսա

երգելու ձայն մըն էր սիկայ։ Գաստոն յանկարծ վեր ցատկեց, ականջ դրաւ, և ձեռքը մէկ մը ճակատը տանելէն վերջ՝ դարձեալ ուշադիր եղաւ։ Իսկ ձայնը միշտ իւր սաղմոսերգութիւնը կը շարունակէր։

— » Տէր Աստուած կըսէր Գաստոն ինքն իրեն։ ես այս ձայնը և այս երգերը լսած եմ ... բայց ո՞ւր, ... հա՛, հա՛, քանի կեանքս անուշ ժամանակը ... դըղեկին մէջն երբեմն ձգուած մատեանը մէջ ... հա՛ հա՛։ Նոյն ինքն Սկուտուհին է ... Դիւան ... ինքս էր որ սանկ ի՛նրգէր ... և Գերմանոսի ալ կը սովրեցընէր ... բայց անկարելի՛ բան ... խելքս երազմ՝ ...»

» Մէկ մ՚ալ բարձր ձայնով մ՚աղաղակեց և դարձեալ ինկաւ։ Սատր զատ-

ճառք ըս ընդարհասակ սկսվառուհին տես-
նելն էր որ բլուրը կ՚ելնէր , զի այն ա-
ռելի ապառաժին տակը հաստատած
էր Գինա իւր բնակութիւնը ։ Գաս-
տոն միշտ այն պատաւելն կը վախնար ։
բայց իւր եղբարց քով եղած ժամանակը
ջանուք երթևեկութիւն ունենալով առանց
պէս ինքն ալ կը թշնամանէր զանիկայ ։
Իսկ հիմայ միանգամուկ ըլլալով՝ շան պէս
կը դարձաւ , անտարակոյս այն կնոջ
գերբնական զօրութիւնը կը հաւատար
որով իրեն հարը սասկալի վախճանը դա-
շակած էր ։ ։ ։

։ Խոշքորը Սկուվառուհին եկաւ դատա-
ղոշեց Գինա զԳաստոն ասանկ ապալիր
տեղ տեսնելով ։ ։ պէտք էր որ առնե-
ւին խելք չունենար ։ ։ ։ կամ գար իւր
եղբօրը վրայ լուրիր առնելու ։ ։ ։ ։

— „Նղբաւրս . . . մռմաց որկրտամոլը որ խղդուել մը կը զգար . . .“

— „Նղբաւրիդ . անունը մոռա՞ն . . . շարունակեց Ինքն . . . այն կերպով ինչպէս որ դուշակած էր . . . Ամէն մոռաւ ծուլութենէ . . . միւսը նոյն իսկ այն զէնքով որով իւր հայրը զարկաւ . . . ահա այսպէս կ՚առնէ Աստուած իւր վրէժը . . . և դու այ, խեղճ տղայ . . . նոյն բախտին ղոհ կ՚ըլլաս՝ թէ որ այդ զէշ որկրամոլութիւնը ձեռքէ չի թողուս . . . անկէ և՛ անոր համար կը մեռնիս։“

„Ոչ՝ . չէ . — մ՚ըսեր այդ . . . գիտանալ չեմ ուզեր . . . օձ՝ քս ձգէ . — կը պոչէր Ղ. ատոն շփոթած՝ և բոլորովին ինքզինքէ դուրս եկած . — Ոչ՝ եմ ուզեր զքեզ տեսնել . . . թող տուր հրթամամ . . .“

„ — Դինա անոր դէպ՝ իբրին տակի գետը վազելը տեսնելու ատրատիրով՝ պոչից — „ խնդաց խելքդ վրա՞ գնը։ Կա դարձիր ... մի՛ վախնար ... այս-չափ վրէժխնդրութիւնը բաւական է։ ա՛լ քեզ կ՚ուզաս ... որկրամոլութենէդ հետի կացիր, և ապրկինչտ եղիր ... քոմակիաւ ... բայց ինք զինքը պիտի սպանէ խեղճը ... գթա՛, Տէր։ գթա՛ անոր ... „

Ընթերցողն Գասպանը տահելով չի-տակ բլրին տակը կը վազէր։ Դինա ալ դողալով գանիոյ բռնելու կը շտապէր և քանի որ անոր շուտ շուտ յառաջ երթալը կը տեսնէր, ինքն ալ իւր քայլերը կը մեծցնէր։ Յանկարծ Սկովտու հին բարձր ապաղակ մը արձակեց ... ապառաժի կատր մը բրդած խուճը դէպ

'ի անդունդ կը մղէր . . . որով և ան-
հետացաւ ալ ։

—„Ամենուն մեռնելը այսպէս տեսնել-
լու է . — գոչեց Դինա , և ձեռուընքերով
գլուխը ծածկելով քարայրը մտաւ ։ —
Տէր մեծ ես և արդար , ըսաւ բնակարա-
նին մէջ ծնկի վրայ գալով . բայց և ո-
ղորմած ես . ահա խուչքորաց երեքին
մեռնելը տեսայ այսօր . . . Թէ որ
չորրորդը մեռած չէ, ազատէ զանիկայ
Ընտուած իմ . . . ազատէ , և կենացս
միւս օրերը փափուած անցընելու կ'
ուխտեմ . . . որովհետև տամ թէ ա-
պաշխարութեան բաց ճամբայներ կան„ ։

Դինա բոլոր գիշերը աղօթքով ան-
ցուց . և երբ առտուանց քաղաք վե-
րադարձաւ՝ կախաղան մը տեսաւ , զոր
Ընդերդի համար մեծ հրապարակին մէջ

պատրաստելու վրայ էին։ Այս տես-
նելով պառաւն ինքն իրեն ըսաւ.
„մէկ մ'երթամ տուիկայ տեսնեմ։„
Այս ըսաւ և շիտակ քաղաքապե-
տին գնաց։ Ընոր մի՝ ը ձգեց զկե-
սարը Խոչքորը ձեռք տալով ըրած ծա-
ռայութիւնը, որոյ վարձք մի միայն
բանդին մէջ Ա՛ ըերդին այց եկնելը
խնդրեց։ Ասոր հրամանն շուտ առ-
նելով՝ եկաւ բատտը դնաց։ Ալբերդ
հոն մինակ չէր. քովը երիտասարդ
կրօնաւոր մը կար, զոր ինքն էր ու-
զած մերձակայ վանքէն։

Սկովտուհւոյն ներս մտած ժամա-
նակը տէր Հօր խօսքերը արդէն իսկ
Ալբերդի սրտին խորը թափանցած է-
ին։ Զայնը անանկ քաղցր և սրտին
իրեն քաշող էր՝ որ գոռին ալքը ար-

տասուբք լինալով անոր առաջ ծնկան վրայ գալով գոչեց։

„ Հայր. Աստուծոյ վրայ ամենեւին մեկը հետս խօսած չէր։ „

„ Ո՞վ է ուրեմն քեզ մեծցնողը՝ որ այդպէս Աստուծոյ իրեններուն ըրած բարութիւնքը քեզ մոռցընել տրուեր է „.

Ղինա յանկարծ ոտքի ելնելով ըսաւ. ով մեծցուց։ — Երէցն և պատժապարտը այնչափ խօսելու պատաղած էին՝ որ պառաւին ներս մտնելը չի տեսան։ — Ով մեզ ուց . . . վայրի անասուն մը . . . Վարաղ մը . . . որ իւր տղաքը մարդ ընելու առեղ՝ ու կ մեկ Խոչքոր ըրած էր։ . . .

Երէցն ալ ելնելով, ուշադրութեամբ Սկուտուհոյն նայելէն վերջը

„ Խոշքոր ըսէր. „ ըսաւ։

„ Դինա. գոչեց Ալբերդ. մինչև այս վերջին վայրկեանս զիս պիտ՝որ հալածես „։

„ Ալբերդ. իմ եղբայրս... ո՜հ. բարեսիրտ Դինա—գոչեց վանականը գլխարկը ետին նետելով... ահա՛ մէկ այլ Խոշքորակ մը՝ որ իւր բազուկները ձեզի կ՝երկնցնէ „։

Ալբերդ և Դինա 'ի միասին գոչեցին. — „ Դերմանո՛ս։ „

Եւ երեքին ալ սիրտը փղձկելով իրարու գիրկ ինկան։ Ալբերդ Սկովտուհւոյն աչքին ալ աւազակ մը չ'էր. սիրտը զղջման էր եկած։

Պառաւն ըսաւ. — „ բարի Դերմանոս. վերջն այն բոցերու մէջ եղող դղեակէն ինչպէս ազատեցիր մեզի

կը պատմես. բայց հիմակու հիմայ եզբայրդ կախաղանէն ազատելու ճարը նայիմք, որուն եթէ յաջողիմք ։։

Ալբերդ յաւելցուց. — „իւր մեղացը՝ քաւութիւն գտնելու համար կրօնաւոր կ'ըլլայ։"

„Հապա աղէկ. ըսաւ Գերմանոս. ես ամէն բան վրաս կ'առնեմ։"

Այս ըսաւ և դուրս ելաւ, պառաւն ալ ետևէն։ . . . . .

Ահելի՞նչ ըսեմք։ Գերմանոս թողութիւն խնդրեց Բաղաքապետէն Ալբերդի համար, որ տարի մը փորձէն ետքը, կրօնաւորական ուխտերն ըրաւ և իւր անունն ալ չի փոխուեցաւ։ Եղբօրն օրինակէն խրախուսուելով ըրած չարիքը մոռցնելու ջանք ըրաւ, և գլուխ ալ հանեց։

Քիչ ժամանակէ վերջը Գերմանոս, որ վանականաց ամէնէն յարգելիներ, հրաման առաւ մեծաւորէն նոյն իսկ Վարազին որջը դտնուած տեղը պըզտիկ մատուռ մը կանգնելու, որուն մէջն ըլլուելիք պաշտամունքը երկու եղբարք փոփոխակի պիտի կատարէին։ Ակեղեցին լմնցաւ, և մէկ կողմը փոքրիկ վանդակապատ պահարան մ'ալ միայնուհւոյ մը, Դինայի, համար, որ փակուած ապրելու և մեռնելու ուխտ էր ըրեր։

Ակեղեցւոյն օծման օրը երկու եղբարք և Ակոլտուհին անդամ մ'ալ մէկ տեղ եկած տեսնուեցան. և Աբերդի միտքը դալով հարցուց. „դու ինչպէս ազատեցար բոցերէն։"

„Վանականէ մը, ինչպէս դուն

ալ. Դինա գիտէ որ ես դղեակէն ելնել չ'ուզեցի. կողոպտողները զիս գտան, և արդար բարկութեամբ զիս պիտի մեռցնէին, երբ վանական մը աղմուկէն հոն գալով՝ ձեռքը գըլխուս վրայ տարածեց և իբր վանքին որդեգիրը ճանչցուց զիս։ Ը. յա՝ զամենքը հեռացնելու բաւական եղաւ։ Կրօնաւորը զիս առաւ տարաւ. իսկ ես այն բարեպաշտ վարուցը վրայ մեծապէս զարմացած էի՝ որ մարդուս անմեղ մը ազատելու կարողութիւն կուտայ։

„Հ՝նորհակալ եմ որ յանցաւորը եղբայրդ ազատել կարենալու համար նոյն բարեպաշտ վարքն ունեցար։"

Երկու եղբարք իրարու դիրկ ինկան. Դինա ալ անոնց մանակից եղաւ։ Յե-

5Ա4



տոյ մեծ հանդիսով իւր պահարանը մտաւ. և որմնաշործ մը գալով դուռը պատ հիւսեց որ ալ ամենևին բացուելիք չ'ունէր, և պառաւ Դինա Սկովտուհին մնացած կեանքն անոր մէջ փակուած անցուց։

Տասը տարիէն մեռաւ՝ իւր գուշակութեանց կատարումը տեսնելով։

Երկու եղբարք ալ Խոչոր անունը միշտ օրհնել տուին։

Ալբերդ Աստուծմէ վախնալ կը սովորեցընէր տղայոց, և առանց հաւատոց ապրելէն ծագած թշուառութիւնը իւր օրինակովը կը ցուցընէր. Աստուծոյ ողորմութենէն չի յուսահատիլ կը քարոզէր, և կ'ըսէր թէ չի կայ այնպիսի ոճիր մը զոր ճշմարիտ զղջումը քաւելչի տայ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

001396

2013

2001